## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<<27>> հունվարի 2015թ. N 19

Ք.Արմավիր

### ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.12-րդ կետի <<բ>> ենթակետով՝

*ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝*

*1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման <<Այլ նպաստներ բյուջեից>> հոդվածով նախատեսված ծախսերից հատկացնել 1000000/մեկ միլիոն/ դրամ, հայկական բանակի կազմավորման գործում ներդրում ունեցած Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի զինվորականներին և ազատամարտիկներին խրախուսելու նպատակով՝ համաձայն հավելվածի:*

*2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի գլխավոր ֆինանսիստ Փ.Կարապետյանին ՝ տասնօրյա ժամկետում կատարել գումարի վճարում:*

*3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:*

*ՄԱՐԶՊԵՏ՝* *Ա.ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ*